ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

" 27" սեպտեմբերի 2012թ. № 94-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» (ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ «ԱՆԳԵՂԱԿՈԹԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ») ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ Ա.ԹԱՆԳՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, **կ ա ր գ ա դ ր ում ե մ.**

1. 2012 թվականի հոկտեմբերի 1-ից լուծել «Սիսիանի բժշկական կենտրոն» (համատեղության կարգով «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա») փակ բաժնետիրական ընկերությունների վերստուգող Արշակ Թանգյանի հետ 2009թ. սեպտեմբերի 29-ին կնքված N 12 աշխատանքային պայմանագիրը՝ նրա գործողության ժամկետը լրանալու պատճառով:

Հիմք՝ 2009թ. սեպտեմբերի 29-ին կնքված N 12 աշխատանքային պայմանագիրը:

2. Կազմակերպությունների տնօրեններին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ա.Թանգյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ. սեպտեմբերի 27
ք. Կապան